թյունը» (1880, հիմնադիր՝ Ա. Մավյան), «Գրաշարներու խնայողության սնտուկ», «Օսմանյան տպարանային բանվորներու միություն») հիմնադիր՝ Գարեգին Կոզիկյան), «Օսմանյան համագործակցական ընկերություն» (հիմնադիր՝ Բյուզանդ Պողաճյան) արհմիութենական կազմակերպությունները։

Ատոնցմե ամենակարևորն էր «Օսմանյան տպարանային բանվորներու միությունը»։ Կովկասեն Կ. Պոլիս եկած սոցիալ-դեմոկրատ Գարեգին Կոզիկյանն է այս միության հիմնադիրը։ Կոզիկյանը ծանոթ էր բանվորական շրջաններու մեջ կատարած իր գործունեությամբ և կարգ մը հրատարակություններով։ Թուրք և հայ տպարանային բանվորները ի մի կը հավաքե և ժողով գումարելով անոնց կը բացատրե միության կարևորությունը, որմե հետո կը խմբագրվի կանոնադրություն մը և կը տպվի Կիլիկիա տպարանը և լույս կը տեսնե առանձին գրքույկով մը։

Միության կենդրոնը կը գտնվեր Պեոյուք Ենի խանի մեջ (Մեծ նոր խան)։ Ուներ նաև երկու մասնաճյուղ Պապը Ալիի պողոտային վրա։ Միությունը, բյուդջեն հետզհետե ավելցնելով, կը դառնար մեծ կազմակերպություն մը։ Նրա ազդեցության աճի շնորհիվ աշխատանքային ժամերը 10—12 ժամեն իջեր էին 8-ի, բանվորներու աշխատավարձերը կրկնապատկված էին և բազմաթիվ տարակարծություններ հարթված։ Միությունը գոյատևած է մինչև մարտի 31-ի դեպքը (երիտթուրքերի երկրորդ հեղաշրջումը, 1909)։

Իսթանպուլի հայ տպարանատերերու գործունեության տևողությունը տևեց դարեր։ Աստվածատուր Դպրեն ետք, մինչև առաջին համաշխարհային պատերազմը, Օսմանյան կայսրության մեջ հայ տպարանատերերու և անոնց անունը կրող տպարաններու գործունեությունը կը ներկայացնենք ստորև ժամանակագրական կարգով։

Սարգիս Դպիր (1703—1721), Տիրացու Գեորգ (1705), որդին՝ Մարտիրոս Դպիր (1721—1752), Պետրոս Լատինացի (1704—1712), Թոքաթցի Սարգիս վարդապետ, Սվազցի Բարսեղ և Հակոբ եղբայրներ (1735—1740), անոնց որդիները՝ Սարգիս և Միքայել (1740—1776), Գաբրիել Դպիր Բարսեղյան (1745—1750), Թրակիացի Աբրահամ Դպիր (1737—1746), Ջինչին Օհաննես Աստվածատուրյան (1746—1767), Ակնցի Ստեփանոս Պետրոսյան (1750—1776), իր որդին Պողոսի հետ (1776—1790), Հովհաննես և Պողոս եղբայրներ (1766—1769), Հովհաննես և որդին Պողոս Աստվածատուրյան (1777—1790), Մկրտիչ Ամիրա Միրիճանյան (Գումգափու, Ֆըշըճը փողոց, 1790—1805), Մաթեոս Դպիր (Պալաթ, 1800—1825), Պողոս Հովհաննեսյան (Քյուրքչյու խան, 1799—